ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 սեպտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

133
(2613)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹԱՆԿ ԳՆՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Առանց պետական նշանակության որեւէ միջոցառման ու զորահանդեսի. այսպես գլխիկոր է Հայաստանի երրորդ Հանրապետությունը բոլորում 31-ամյակը: Երեք տասնամյակների մեջ սա թերեւս առաջին դեպքն ու տարին է, որ այդքան թանկ գնով ձեռք բերված անկախությունը Հայաստանը պարզապես չի տոնում: Կառավարությունից դեռ օրեր առաջ էին հաստատել, որ «հայ-ադրբեջանական սահմանին ադրբեջանական զինված ուժերի սանձազերծած ագրեսիայի պատճառով՝ հետաձգվել է Անկախության օրվան նվիրված միջոցառումը: Խոսքը «Մեր ժամանակների հերոսը» մրցանակաբաշխության մասին է, որն ասես ոչ թե անկախությունն արժեւորող միջոցառման, այլ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու կառավարական կաբինետի բենեֆիսի նմանվող երեկույթ լինի: «Այլ միջոցառումներ եւս նախատեսված չեն»,- ասում են գործադրից:

Ազգային ժողովի նախագահությունը գործադրի գործընկերներին է հետեւել ու նույնպես ոչինչ չի նախաձեռնել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այդ մասին ասաց ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանը:

«ՀՀ սուվերեն տարածքը կարմիր գիծ է մեզ համար: ՀՀ ինքնիշխանությունը, ընդհանրապես անկախությունը, քննարկման ենթակա լինել չեն կարող»,- օրերս խորհրդարանում նման բարձրագոչ հայտարարությամբ հանդես եկող Փաշինյանի իշխանության օրոք, փաստորեն, անտեսվում է Անկախության տոնը, որ ձեռք է բերվել ավելի քան յոթդարյա պետականություն չունենալուց հետո: Եւ որեւէ կերպ չնշելը, թեկուզ փոքրիկ շքերթի կամ այլ ձեւաչափով, պարզապես խայտառակություն է, ինչին, ցավոք, հայ հասարակությունը համակերպվում ու հանդուրժում է: Անկախ ամեն ինչից, Հայաստանը, այո, արյան, զրկանքների ու թանկ գնով ձեռք բերված Անկախություն պետք է ունենա ու դարեր շարունակ տոնի այն, հետեւաբար՝ շնորհավո՛ր տոնդ, անկա՛խ Հայաստան:



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախորդ շաբաթ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ հարձակման օրերին՝ սեպտեմբերի 13-ին, խորհրդարանում խոսեց Հայաստանի՝ զենք ձեռք բերելու խնդիրների մասին: Ըստ նրա՝ թեեւ Հայաստանը բավարար ֆինանսական միջոցներ ունի, բայց ոչ բոլորն են, որ պատրաստ են մեզ զենք վաճառել: Ասել է թե՝ փող ունենք, բայց զենք առնել չենք կարողանում: «Մենք կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ն այսօր ունի բոլոր ֆինանսական հնարավորությունները՝ ձեռք բերելու իրեն անհրաժեշտ պաշտպանական զենք-զինամթերքը, բայց, բնականաբար, ոչ բոլոր երկրներն են, որ պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին»: Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունը բավականին տարակուսելի է, եթե հաշվի առնենք, որ 2018 թվականի հեղափոխությունից հետո արդեն եղել են դեպքեր, երբ Հայաստանը զենք է ձեռք բերել եւ այն էլ՝ անհատի միջոցով: Խոսենք փաստերով. ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռքբերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՋՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՋՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, «Պատրոն Դավո» մականունով հայտնի՝ զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին: Դավիթ Գալստյանն արտերկրում գրանցված եւ իրեն պատկանող ընկերության տնօրեն Ա.Բ.-ի հետ ՀՀ ՋՈՒ ԳՇ կարիքների համար պետք է մատակարարեր 1983-1986թթ. արտադրության հրանոթի համապատասխան տրամաչափի կրակոցներ, սակայն, նախատեսված զինատեսակի փոխարեն, խաբեության եղանակով ՊՆ-ին մատակարարվել են 1977 թվականի չեխական արտադրության մեկ այլ տեսակի հրանոթի կրակոցներ, որոնք իրենց մարտավարական եւ տեխնիկական հատկանիշներով էապես զիջել են ՊՆ-ի կողմից պատվիրված զինատեսակներին: Գործարքի ընդհանուր արժեքը կազմել է 1 մլն 83 հազար դոլար: Այսինքն, հեղափոխությունից հետո, ամեն դեպքում, սպառազինություն ձեռք է բերվել, չնայած՝ անորակ: Նշանակում է, որ սա, փաստացի, Նիկոլ Փաշինյանի հերթական մանիպուլյացիան է եւ նա խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին, ասելով, որ զենք չեն կարողանում բերել:

Իրավապահ համակարգում ուշագրավ իրավիճակ է ստեղծվել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ տարբեր աղմկահարույց քրեական գործերով՝ փաստաբանները կապ են հաստատում նախաքննական մարմինների հետ եւ հետաքրքրվում են, թե, օրինակ, իրենց պաշտպանյալի գործով երբ են պատրաստվում նախաքննության ավարտ տալ կամ գործը կարճել, եւ նմանօրինակ այլ հարցեր: Ի պատասխան նրանց, նախաքննական մարմինների քննիչները հայտնում են, որ այս պահի դրությամբ որեւէ բան չեն կարող ասել, քանի որ Գլխավոր դատախազ է փոխվել, եւ տարբեր քրեական գործերով կարող են նոր փոփոխություններ լինել, ուստի այս պահին քրեական գործերով որեւէ հստակություն կամ որոշում չեն կարող կայացնել: Ասել է թե՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մուտքը դատախազություն նաեւ ազդելու է աղմկահարույց քրեական գործերի ընթացքի վրա, իսկ թե ինչ փոփոխություններ են սպասվում, կհետեւենք զարգացումներին: Նշենք, որ անգամ այսօր ՀՀ գլխավոր դատախազությունն էր պաշտոնական հաղորդագրություն տարածել, նշելով՝ Աննա Վարդապետյանը խորհրդակցություն է անցկացրել եւ ընդգծել է, որ կարեւորում է քրեական վարույթների, նախաքննության նկատմամբ արդյունավետ հսկողությունը, դատախազական ակտերի որակի ապահովումն ու դատարանում մեղադրանքի պատշաճ պաշտպանությունը: «Առաջին հերթին ինձ անհրաժեշտ է հասկանալ տեղերում աշխատանքի կազմակերպվածության ձեւը, ժամանակի կառավարումը, վարույթների քանակը, դրանց կառավարումը: Կարեւոր է հասկանալ դատախազական ակտերի, նախաքննության նկատմամբ հսկողության, ինչպես նաեւ դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը»:

Երեւանի մանկապարտեզների սաների ծնողները հայտնվել են անհարմար դրության մեջ. պատճառը կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի որոշումն է: Խոսքը 2021 թվականի հոկտեմբերի 11-ի 76-Ն որոշումն է, ըստ որի՝ ուսումնական տարվա ընթացքում սանի՝ անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում, ըստ կրթության նախարարի որոշման՝ հարգելի չի համարվում երեխայի բացական անգամ այն դեպքում, երբ երեխան հիվանդ է եղել եւ ներկայացրել է բժշկի տեղեկանք՝ այդ մասին վկայող: Այս որոշումը ծնողների շրջանում լուրջ դժգոհություն է առաջացրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեւական ժամանակ է, ինչ դժգոհություններ է ստանում մանկապարտեզների սաների ծնողներից: Բանն այն է, որ առանց այդ էլ ծնողների մեծ մասը ահռելի ջանքեր է գործադրում, որ երեխաներին տեղավորի մանկապարտեզում: Իսկ այդ տարիքի երեխաները, սովորաբար, մանկապարտեզ հաճախելու հենց երկրորդ կամ երրորդ օրն արդեն հիվանդանում են եւ ստիպված են լինում օրերով տանը մնալ: Երեխաները՝ հատկապես մսուր մանկապարտեզ հաճախող, գտնվում են խառը իմունիտետի փուլում: Բացի այդ, վերջին շրջանում ջրծաղիկի դեպքերն են ավելացել մանկապարտեզներում, իսկ ինչպես հայտնի է՝ ջրծաղիկի բուժման ընթացքը բավականին երկար է տեւում. միայն 21 օր արգելքի փուլն է, երեխան պետք է ինքնամեկուսանա: Սակայն, սա հաշվի չի առնվել: Բացի այդ, պարզվեց նաեւ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ չի քննարկվել հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նախարարությունից ասացին, որ իրենք տեղյակ չեն եւ չեն առնչվում այդ որոշման հետ: Մինչդեռ, պետք է երեխաների բացակայությունների սահմանափակումը առաջնահերթ քննարկվեր հենց առողջապահության նախարարության հետ՝ հարցը դիտարկելով, հիվանդությունները, վիրուսները եւ այլ խնդիրները հաշվի առնելով: Մանկապարտեզների սաների ծնողները պահանջում են, որ փոփոխություններ արվեն, եւ հրամանը նախկին տեսքին վերադառնա, այսինքն՝ 75 աշխատանքային օրերի բացակաների համար, երբ հիվանդության վերաբերյալ ներկայացվի բժշկի տեղեկանք, ապա բացակաները հարգելի համարվեն:

ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔ

«ՈՉ ԹԵ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ, ԱՅԼ ՉԵՆ ՈՒԶՈՒՄ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախորդ շաբաթ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ հարձակման օրերին՝ սեպտեմբերի 13-ին, խորհրդարանում խոսեց Հայաստանի՝ զենք ձեռք բերելու խնդիրների մասին: Ըստ նրա՝ թեեւ Հայաստանը բավարար ֆինանսական միջոցներ ունի, բայց ոչ բոլորն են, որ պատրաստ են մեզ զենք վաճառել: Ասել է թե՝ փող ունենք, բայց զենք առնել չենք կարողանում:

«Մենք կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ն այսօր ունի բոլոր ֆինանսական հնարավորությունները՝ ձեռք բերելու իրեն անհրաժեշտ պաշտպանական զենք-զինամթերքը, բայց, բնականաբար, ոչ բոլոր երկրներն են, որ պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին»,- խորհրդարանում հայտարարեց Նիկոլ Փաշինյանը: Այս ու ռազմական ոլորտին վերաբերող հարակից այլ թեմաների շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ռազմական փորձագետ, ազատամարտիկ Արթուր Եղիազարյանի հետ:

-Վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարեց, որ թեեւ Հայաստանն ունի բավարար ֆինանսական միջոցներ, բայց հաճախ մեզ հրաժարվում են զենք վաճառել:

-Ազգային ժողովի հարթակից նման բան հայտարարելն անլրջություն է: Մեր երկիրը որեւէ մեկի սեփականությունը չէ, որեւէ մեկի հայրական տունը չէ: Իշխանության եկած ուժի գերխնդիրը պետք է լինի մարդկանց հարցերը, խնդիրները լուծելը նրանց մտահոգությունները լսելը: Իսկ եթե ի վիճակի չես դրանք անել, ուրեմն պետք է հեռանաս. եթե հայտարարում ես, որ մեզ զենք չեն վաճառում, ուրեմն անկարող ես: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ մինչեւ ձեզ (օրվա իշխանությանը նկատի ունի- հեղ.) ՀՀ-ին զենք վաճառում էին, հիմա չեն վաճառում:

-Նման բան առհասարակ հանարավո՞ր է, որ ցանկանաս զենք գնել, ու դա վաճառող չլինի:

-Առանձին անհատներ են նույնիսկ զենքի վաճառքով զբաղվում, հոգում, որ դա հասնի պատվիրատուին: Ամբողջ աշխարհի առաջնային բիզնեսներից մեկը զենքերի վաճառքն է, էլ չասած, որ պատերազմները հրահրում են հենց զենք վաճառելու համար: Փաշինյանի այդ հայտարարությունը վկայում է, որ կամ զենք գնելու ցանկություն չունես, կամ ապաշնորհ են: Ուրիշ բան դրա տակ տեսնել հնարավոր չէ:

-Այնքան ապաշնորհ, որ անգամ զե՞նք չեն կարողանում ձեռք բերել:

-Կարծում եմ, որ ոչ թե չեն կարողանում, այլ չեն էլ ցանկանում ձեռք բերել: Իրենց հրապարակած տվյալներն ուսումնասիրելով, համենայնդեպս, ես այդպիսի տպավորություն ունեմ: Եթե գաղտնի ինչ-որ գործընթացներ են կան, որոնց մասին չի բարձրաձայնվում, դա ուրիշ հարց է:

-44-օրյա պատերազմի ժամանակ ամենից հաճախ հնչող հարցը, մտահոգությունը հետեւյալն էր՝ «ինչո՞ւ օդը փակ չէ» կամ «գոնե օդը փակեք»: Այսօր՝ պատերազմից երկու տարի անց արդեն ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի օդը փա՞կ է:

- Իհարկե ռազմական գաղտնիքից ելնելով այդքան էլ ճիշտ չէ այդ մասին մանրամասն խոսելը, բայց այն, որ ՀՕՊ ոլորտի համալրումն ու վերազինումն այսօր մի շարք հարցեր է առաջացնում, փաստ է: Ոչ միայն օդը փակ լինելու հարցն է մտահոգիչ, այլ նաեւ սահմանների ու բնագծերի ոչ ամբողջական, թերի կահավորումը: Բայց սրան զուգահեռ ուզում եմ նշել, որ Հայաստանն ու հայ մասնագետները թե՛ գիտելիքներ, թե՛ պոտենցիալ ունեն ոչ միայն հակաօդային պաշտպանության միջոցներ, այլեւ տարատեսակ զենքեր ու ռազմական նշանակության իրեր արտադրելու համար: Ավելին՝ առանձին անհանտները սեփական նախաձեռնությամբ են հաճախ զենքեր նախագծում, բայց դրա արտարդության համար, պետությունից անհրաժեշտ աջակցություն մարդիկ չեն ստանում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ

ՄԵՐ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ

«ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի գլխավորած կոնգրեսական պատվիրակության հետ իմ եւ գործընկերներիս հանդիպումը նախաձեռնել էր ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը»: Այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Բնականաբար, ես առիթը չէի կարող բաց թողնել՝ հանդիպելու եւ ԱՄՆ ազդեցիկ պաշտոնյայի մոտ բարձրաձայնելու Ադրբեջանի հանցանքների մասին՝ սկսած պատերազմական հանցանքներից /զորամաս է թիրախավորել, խաղաղ բնակավայրերի է հարվածել, թիրախավորել է տասնյակ բնակավայրեր, այդ թվում՝ Գորիս, Սիսիան, Կապան, Ջերմուկ, Վարդենիս, Տեղ, Գեղամասար համայնքները/, վերջացրած մեր զինծառայողների, կանանց խոշտանգումներով, դիակների մերկացումներով, դիակապտության այլ դեպքերով… պատերա՞զմ է սա, թե՞ բարբարոսություն: Աշխարհի լռությունը, երկակի չափանիշների կիրառումը մարդու իրավունքների ոլորտում անթույլատրելի է:

Պատվիրակության նախագահին ներկայացնելով կոնկրետ տեղեկություններ՝ հատուկ խնդրեցի, որ օգնի մեր այդ դիրքերում մնացած զինծառայողներին կամ նրանց դիերը վերադարձնելու հարցում իր ազդեցությամբ ճնշի Ադրբեջանին՝ կատարելու միջազգային հանրության առջեւ ստանձնած պարտավորությունները, եւ վերադարձնի մեր բոլոր գերիներին:

Տիկին Փելոսիին միաժամանակ հայտնեցի, որ Ադրբեջանի հանցավոր վարչակազմը 2022թ. հունվարից արգելել է Արցախի շրջաններում անհայտ կորած հայ զինծառայողների եւ քաղաքացիական անձանց մարմինների որոնողական աշխատանքները, որոնք արդյունքում դադարեցվել են: Ահազանգեցի, որ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետեւանքով՝ խախտվել է հայերի կյանքի, խաղաղ եւ երջանիկ կյանք վարելու, կրթության եւ մյուս իրավունքները. ունենք զոհեր եւ վիրավորներ ինչպես զինծառայողների, այնպես էլ քաղաքացիական բնակչության շրջանում:

Ասացի, որ իր հանցավոր գործողություններով Ադրբեջանը զավթել է մեր ջրի ակունքները, պղծում է մեր պատմամշակութային հուշարձանները, քանդում՝ գերեզմանները եւ գործարան կառուցում… շատ այլ թեմաներ, որոնց կանդրադառնամ՝ ըստ անհրաժեշտության:

Հիմա մեր խնդիրը մինչ այս վերջին պատերազմը գերեվարված եւ նոր գերիներն են, անհայտ կորածները, դիերը (իհարկե Կարմիր խաչի հետ մշտական կապի մեջ եմ) եւ Հայաստանի դեօկուպացիան քաղաքական կամ այլ ճնշումների գնով: Մնացածը՝ առաջիկայում»:

Ե՞ՐԲ ՀԱՊԿ-Ը ԿԺԱՄԱՆԻ

ՀԱՊԿ նախագահությունը Երեւան կժամանի, բայց նոյեմբեր ամսին միայն: Այս մասին անձամբ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինն է տեղեկացրել:

«2022 թվականի նոյեմբերին Երեւանում տեղի կունենա Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ամենամյա գագաթնաժողովը»,- ասել է ՌԴ նախագահը՝ երիցս շեշտելով, որ ՀԱՊԿ-ը գործուն միջոցներ է ձեռնարկում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սրացումը նվազեցնելու ուղղությամբ:

Նշենք, որ սեպտեմբերի 13-ից՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանների վրա հարձակվելու օրվանից սկսած, ամբողջ հայ հասարակությունը սպասում է, թե ՀԱՊԿ-ը կամ դրա առաձին ստորաբաժանումները ե՞րբ են Հայաստան ժամանելու, որեւէ տեսակի օգնություն, միջամտություն ցուցաբերելու համար:

Հավելենք նաեւ, որ ՀԱՊԿ առաքելության խումբը՝ գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորովի գլխավորությամբ, օրեր առաջ է ժամանել Հայաստան ու հայ-ադրբեջանական սահմանին լարվածության թուլացման առաջարկներ է մշակել: Այժմ, փաստորեն, Վլադիմիր Պուտինի փոխանցմամբ՝ նոյմեբերին ամբողջ ՀԱՊԿ նախագահությունը Երեւանում կլինի:

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆԵՐ

ՀՀ ֆինանսների նախարարությունը նախատեսում է բարձրացնել ինտերնետ շահումով խաղերի եւ վիճակախաղերի պետական տուրքի գծով բեռը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կողմից՝ յուրաքանչյուր 100 մլրդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը կազմելու է 300 մլն դրամ: Իսկ տոտալիզատորի կազմակերպչի կողմից յուրաքանչյուր 30 միլիարդ դրամի չափով խաղադրույք ընդունելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը կազմելու է 100 մլն դրամ:

Նշենք, որ 2017-2019 թվականների ընթացքում ինտերնետ շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման համար պետական տուրքը կազմել է 500 մլն դրամ, իսկ 2020 թվականից 600 մլն դրամ է:

Բացի այս, 2017 թվականին ոլորտի կողմից ընդունվող խաղադրույքների ծավալը կազմել է 138,5 մլրդ դրամ, իսկ 2021 թվականին՝ 3.931 մլրդ դրամ:

Չնայած այն հանգամանքին, որ 2020 եւ 2021 թվականներից ոլորտը սկսել է հարկվել շահութահարկով, ոլորտի կողմից վճարվող հարկերը եւ տուրքերը համարժեք չեն ոլորտի աճի տեմպերի եւ ՀՆԱ-ում ոլորտի կշռի հետ:

Բայց մյուս կողմից, կատարված խաղադրույքների ծավալների աճը սկսել է մտահոգել գործադիրին եւ որոշում է կայացվել տարբեր գործիքներով, այդ թվում՝ հարկային, զսպել խաղադրույքների կատարումը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԻՄՆԱԴՐԱՄ Է ՍՏԵՂԾՎԵԼ

ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը հասարակական գործունեությամբ կզբաղվի: Քիչ առաջ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ իր փորձն այս դաշտում կներդնի:

Նա հիմնել է «Թաթոյան իրավունքի եւ արդարության» հիմնադրամը:

«Ակտիվ հանրային գործունեությամբ եմ զբաղվելու: Հիմնադրամի հիմնական նպատակը մարդու իրավունքի գերակայության ապահովումը, ՀՀ-Արցախ կապերի ապահովումն ու ամրապնդումն է եւ այլն»,- ասաց նա՝ նշելով, որ որեւէ մի մեծահարուստի ֆինանսավորումից չեն օգտվում:

«Հիմադրամը հիմնադրել ենք սփյուռքի մեր բարեկամների աջակցության շնորհիվ»,- նշեց նա:

ՄԻ ՇԱՐՔ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Սեպտեմբերի 15-ին ստանձնելով ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնն Աննա Վարդապետյանը մի շարք նոր նշանակումներ է արել: Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանը ազատվել է պաշտոնից:

Վարդապետյանի՝ սեպտեմբերի 16-ի հրամանով պաշտոնից ազատվել են նաեւ զինվորական դատախազ Վահե Հարությունյանը եւ նրա տեղակալ Արսեն Սարդարյանը: Սեպտեմբերի 16-ի մեկ այլ հրամանով՝ մինչեւ Գլխավոր դատախազի տեղակալի նշանակումը, զինվորական դատախազի, Գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը դրվել է զինվորական դատախազի տեղակալ Գուրգեն Հակոբյանի վրա:

Մեկ այլ հրամանով՝ մինչեւ Երեւան քաղաքի դատախազի նշանակումը պարտականությունների կատարումը դրվել է Լիլիթ Գրիգորյանի վրա:

Աննա Վարդապետյանի սեպտեմբերի 16-ի մեկ այլ հրամանով էլ զինվորական դատախազի տեղակալ Վահագն Մուրադյանը նշանակվել է գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնին:

Զինվորական դատախազի տեղակալ է նշանակվել Սեւակ Հովհաննիսյանը:

ArmLur.am-ը գրել է, որ կադրային ջարդը Գլխավոր դատախազությունում սկսված է:

ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ԱԶԱՏՈՒՄԸ

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ զինդատախազ Վահե Հարությունյանը ազատվեց պաշտոնից. Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ստորագրեց նրա ազատման դիմումը, պաշտոնից ազատվել է նաեւ նրա տեղակալ Արսեն Սարդարյանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը մերժել է ՀՀ զինվորական դատախազ Վահե Հարությունյանի ազատման դիմումը ստորագրել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԿՈՂՄԵՐԸ ՄԵՂԱԴՐԵԼ ԵՆ ԻՐԱՐ

Երեկ Նյու Յորքում տեղի ունեցավ Միացյալ Նահանգների պետական քարտուղար Էնթոնի Բլինքենի, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի եռակողմ հանդիպումը:

Այն տեղի է ունեցել Նյու Յորքի «Փալաս» հյուրանոցում՝ պետքարտուղարի միջնորդությամբ եւ մոտ մեկ ժամ է տեւել: Հանդիպման մեկնարկին լրագրողների ներկայությամբ ուղերձով հանդես է եկել միայն պետքարտուղարը:

Նա գոհունակություն է հայտնել ռազմական գործողությունների դադարեցման կապակցությամբ եւ ասել է, թե եւ՛ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, եւ՛ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն իր հետ հեռախոսազրույցներում փոխանցել են, որ պատրաստ են խաղաղության: Ապա եռակողմ քննարկումները շարունակվել են դռնփակ ռեժիմով:

Հայաստանի արտաքին գործերի նախարարության հաղորդագրության համաձայն՝ Արարատ Միրզոյանն ընդգծել է, որ ադրբեջանական զինված ուժերը պետք է դուրս բերվեն Հայաստանի տարածքից: Նա հայտարարել է, որ ուժի կիրառումը, ինչպես նաեւ դրա սպառնալիքն անընդունելի են:

Միրզոյանի խոսքով՝ իրավիճակի հետագա սրումը կանխելու համար անհրաժեշտ է գործադրել միջազգային մեխանիզմներ:

Նախարարը կարեւորել է հումանիտար խնդիրները, այդ թվում՝ ռազմագերիներին շուտափույթ հայրենադարձելու անհրաժեշտությունը:

Նախօրեին Հայաստանի Անվտանգության խորհուրդը հայտնել է, որ վերջին բախումների հետեւանքով զոհվածների եւ անհետ կորածների թիվը հասել է 207-ի, երկու քաղաքացիական անձի գտնվելու վայրը հայտնի չէ, 20 զինծառայող գերեվարվել է:

Արարատ Միրզոյանը եռակողմ հանդիպման ընթացքում նաեւ վերահաստատել է, որ Հայաստանը պատրաստ է ներգրավվել հարաբերությունների համապարփակ կարգավորման գործընթացում:

Իսկ ահա ըստ «Թրենդ» ադրբեջանական լրատվական գործակալության, Ջեյհուն Բայրամովը վերջին բախումների համար մեղադրել է հայերին, ասելով, թե հայկական կողմը դիմել է սադրանքների, ինչին ի պատասխան՝ ադրբեջանական կողմը ռազմական գործողություններ է անցկացրել:

Բայրամովի փոխանցմամբ՝ տարածաշրջանում վերականգնողական լայնածավալ ծրագրեր իրականացնող եւ նախկին փախստականներին վերաբնակեցնող Ադրբեջանին իրավիճակի սրումը ձեռնտու չէ:

Բայրամովը պնդել է, թե Ադրբեջանի տարածքը 30 տարի ապօրինի զավթված էր, 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանն առաջարկել է խաղաղություն կնքել եւ բացել կոմունիկացիաները:

Բայրամովը նաեւ նշել է, որ Ադրբեջանը պատրաստ է լուծել հումանիտար հարցերը, սահմանազատման ու սահմանագծման աշխատանք իրագործել, սակայն Հայաստանն, իբր, խոչընդոտում է այդ գործընթացներին եւ կոպտորեն խախտում է եռակողմ հայտարարություններով ստանձնած պարտավորությունները:

Ադրբեջանի ԱԳ նախարարը Նյու Յորքում ընդգծել է եռակողմ հայտարարություններին եւ բրյուսելյան վերջին հանդիպման արդյունքներին համապատասխան կայուն խաղաղություն ապահովելու նպատակով՝ երկու երկրների ղեկավարների միջեւ հրատապ բանակցություններ անցկացնելու պատրաստակամությունը:

ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակի փոխանցմամբ՝ հանդիպման մասնակիցները «քննարկել են հաջորդ քայլերը, եւ պետքարտուղար Բլինքենը կողմերին խրախուսել է՝ կրկին հանդիպել մինչեւ ամսվա վերջ»: Այլ մանրամասներ Նեդ Փրայսը չի փոխանցում՝ նշելով միայն, որ սրանք կողմերի միջեւ առաջին ուղղակի բանակցություններն էին վերջին մարտերից հետո:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ԵՎ ԲԱՅՐԱՄՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը: Այս մասին հայտնում են Արտաքին գործերի նախարարությունից:

Հանդիպման ընթացքում Արարատ Միրզոյանը ընդգծել է, որ ադրբեջանական զինված ուժերը պետք է դուրս բերվեն ՀՀ ինքնիշխան տարածքից, ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումն անընդունելի են, իսկ հետագա էսկալացիաների կանխարգելման նպատակով պետք է ներդրվեն միջազգային մեխանիզմներ:

ՀՀ ԱԳ նախարարը կարեւորել է հումանիտար խնդիրների, այդ թվում՝ ռազմագերիների հայրենադարձման շուտափույթ կարգավորումը: Նախարար Միրզոյանը վերահաստատել է հայկական կողմի պատրաստակամությունը՝ ներգրավվելու հարաբերությունների համապարփակ կարգավորման գործընթացում:

ՈՐՈՇՈՒՄ Է ՀԱՍՏԱՏԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 19-ին որոշում է ստորագրել, որում նշվում է.

«Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ եւ 151-րդ կետերը՝

Կարեն Համլետի Սարգսյանին 2022 թվականի սեպտեմբերի 19-ից նշանակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար՝ 12 ամիս փորձաշրջանով»,-նշվում է որոշման մեջ:

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆՈՐԴ

Վրաստանը նախկինի պես պատրաստ է հանդես գալ որպես միջնորդ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության կարգավորման համար, իսկ Թբիլիսին առաջարկում է՝ որպես բանակցությունների հարթակ: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, վկայակոչելով «ՏԱՍՍ»-ը, այս մասին հայտնել է Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլյա Դարչիաշվիլին:

Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը Նյու Յորքում է գտնվում վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի գլխավորած պաշտոնական պատվիրակության կազմում:

«Եթե անհրաժեշտ լինի, որ մեր երկիրը ներգրավվի գործընթացին որպես միջնորդ, մենք միշտ պատրաստ ենք», - ասել է Դարչիաշվիլին:

Նա հավելել է, որ Վրաստանն այդ կապակցությամբ ոչ մի նախապայման չունի: Թբիլիսիի գլխավոր նպատակը տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունն է: ԱԳ նախարարը հիշեցրել է, որ Վրաստանի վարչապետի ջանքերի շնորհիվ 2021 թվականի հունիսին Ադրբեջանը Հայաստանին է հանձնել 15 զինծառայող, իսկ Երեւանը Բաքու է ուղարկել ականապատ դաշտերի քարտեզներ:

Վրաստանի միջնորդության եւս մեկ օրինակ է դարձել Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյանի եւ Ջեյհուն Բայրամովի հանդիպումը, որը տեղի է ունեցել հուլիսի 16-ին Թբիլիսիում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է Կառավարության հեղինակած «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» նախագծերի փաթեթը, որը միտված է փաստաբանական համակարգի բարեփոխմանը:

ԱԺ-ից հայտնում են, որ նախագծով առաջարկվում է որոշակիորեն վերանայել փաստաբանների պալատի ներքին կառավարման կառուցակարգը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել նոր մասնագիտացված մարմին՝ կարգապահական հանձնաժողովը, որն ունենալու է փաստաբանների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը քննելու իրավասություն, ինչը հնարավորություն է տալու ապահովել նման գործերի առավել պատշաճ քննությունը: Ըստ էության՝նախատեսվում է նաեւ կարգապահական գործերի քննության երկաստիճան համակարգ, քանի որ կարգապահական հանձնաժողովի որոշումները հնարավոր կլինեն բողոքարկել փաստաբանների պալատի խորհրդին:

Նախատեսվում է ընդլայնել նաեւ խորհրդի լիազորությունները, հատկապես՝ հանրային պաշտպանների գործունեության բնագավառում. օրինակ՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին նշանակելիս խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք կունենա առաջադրել իր թեկնածուին, խորհրդին իրավասություն կվերապահվի սահմանել հանրային պաշտպանի գրասենյակի տարեկան կատարողական ցուցանիշները, ստուգել եւ գնահատել հանրային պաշտպանների գործունեությունը: Նույն սկզբունքով վերանայվում է փաստաբանական դպրոցի կառավարման համակարգը, որտեղ տնօրենը կնշանակվի՝ դրա կառավարման խորհրդի բոլոր անդամների կողմից թեկնածու առաջադրելու սկզբունքով:

Փաստաբանների պալատի մարմինների գործունեության արդյունավետության ապահովման նպատակով՝ նախատեսվում են նաեւ այդ մարմինների անդամների անհամատեղելիության պահանջներ, երբ մեկ մարմնի անդամը կամ պալատի պաշտոնատար անձը միաժամանակ չի կարողանա պաշտոնավարել պալատի այլ մարմնում, ինչպես նաեւ սահմանվում են պալատի նախագահի եւ խորհրդի անդամների՝ քաղաքական չեզոքություն ու զսպվածություն դրսեւորելու պահանջներ: Նախատեսվող պահանջները կնպաստեն փաստաբանության մասնագիտական անկախության ամրապնդմանը:

Նախագծով առաջարկվող հաջորդ կարեւոր ուղղությունը վերաբերում է անվճար եւ անհատույց իրավաբանական օգնության կառուցակարգերի զարգացմանը: Մասնավորապես, առաջարկվում է ընդլայնել հանրային պաշտպանության շահառուների շրջանակը՝դրանում նախատեսելով նաեւ.

- օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու գործերով,
- անձանց, ում վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ, ինչպես նաեւ
- տուժողներին, եթե վերջիններս պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչեւ 16 տարեկան երեխա:

Միեւնույն ժամանակ նախատեսվում են խրախուսանքի միջոցներ այն փաստաբանների համար, ովքեր կամավոր՝ անհատույց կերպով, իրավաբանական օգնություն են տրամադրում անձանց, ինչպես նաեւ նախատեսվում են նման օգնության տրամադրմանը նպաստող եւ դրա մասին կամավոր հաշվետվողականության վերաբերյալ կառուցակարգեր:

Նախագծով առաջարկվում են նաեւ փոփոխություններ, որոնք ուղղված են փաստաբանների որակավորման կարգի վերանայմանը: Այսպես, ի տարբերություն ներկայումս գործող կարգի, երբ որակավորման քննություններին կարողանում են մասնակցել միայն փաստաբանական դպրոցում համապատասխան ուսուցում անցած անձինք, նախագծով սահմանվում է, որ առանց փաստաբանական դպրոցում ուսուցում անցնելու՝ փաստաբանի որակավորման քննությանը կկարողանան մասնակցել.

- միաժամանակ իրավագիտության բակալավրի եւ իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճաններ կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան եւ իրավաբանի՝ առնվազն յոթ տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձինք,
- նախկինում առնվազն հինգ տարվա փաստաբանական գործունեության ստաժ, ինչպես նաեւ առնվազն հինգ տարվա քննիչի, դատախազի կամ դատավորի մասնագիտական ստաժ կամ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք:

Նախագիծը մշակվել եւ ներկայացվել է փաստաբանական համայնքի հետ լայն կոնսենսուսի արդյունքում:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԴԻ

Գյումրու Շիրակացի փողոցի շենքերից մեկում երեկ՝ սեպտեմբերի 20-ին, հայտնաբերվել է 60-ամյա կնոջ դի՝ պարանոցի շրջանում սուր-կտրող ծակող առարկայից ստացած հարվածի հետքերով: Այս մասին հայտնել են ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից:

Ոստիկանությունից հայտնեցին, որ ահազանգը ստացվել է երեկ՝ժամը 11:50-ին:

Դեպքի առնչությամբ ընթանում է քննություն:

60-ամյա կինը աշխատում էր Գյումրու Սովխոզի մանկապարտեզում՝ «Հենզել եւ Գրետել» ՀՈԱԿ-ում՝ որպես հավաքարար:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Օգոստոսի 20-ին՝ ժամը 20:50-ին, «Կապան» բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակի առաջնային մակերեսի կտրածծված, թափանցող վերք՝ թոքի վնասումով, պնեւմոթորաքս ախտորոշմամբ տեղափոխվել է 32-ամյա երիտասարդ:

Ոստիկանության Կապանի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել էին, որ Կապան քաղաքի երաժշտական դպրոցի հարակից զբոսայգում անձնական հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխվածին դանակահարել էր հասակակից համաքաղաքացին:

Ոստիկանությունից հայտնում են, որ նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Բացատրական աշխատանքի արդյունքում Կապան քաղաքի 32-ամյա բնակիչը ներկայացել էր բաժին:

Նա ձերբակալվել, այնուհետեւ կալանավորվել էր:

Դանակահարված երիտասարդը տեղափոխվել էր «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Սեպտեմբերի 19-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանության Կապանի բաժին հաղորդում է ստացվել, որ օգոստոսի 21-ին բուժօգնության տեղափոխված 32-ամյա Սուրեն Ո.-ն մահացել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔ

Ուշագրավ դեպք Աջափնյակ վարչական շրջանում. ArmLur.am-ին հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ վարչական շրջանի առաջին շղթայի բակերից մեկում պարեկների եւ մի քանի տղաների հետ ծեծկռտուք է եղել: Բանը հասել է այնտեղ, որ պարեկները 16-րդ թաղամասի բակով մեկ փորձել են բռնել պարեկների վրա հարձակված տղաներին եւ բղավել. «Կանգնի, թե չէ կկրակեմ»:

Իսկ ինչից է սկսվել վեճը: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ բակում մեկ մեքենա կանգնել է անթույլատրելի վայրում, եւ պարեկները փորձել են, ազդանշան տալով, գտնել վարորդին, ինչը զայրացրել է բակի մի խումբ «լավ տղաների», որից հետո սկսվել է քաշքշուկ, կիրառվել է արցունքաբեր գազ: Մեզ հայտնի դարձավ, որ դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, կան բերման ենթարկվածներ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԿՆՈՋԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ծանր վիրավորանքի համար քաղաքացիները շարունակում են ենթարկվել պատասխանատվության: Մեզ հայտնի դարձավ, որ Ալիտա Ալչանգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Ֆեյսբուք սոցիալական հարթակի «Գարիկ Գալստյան» անվամբ օգտատիրոջ 2022 թվականի մարտի 15-ի՝ Էդուարդ Աղաջանյանը չի բացառում Արցախը Ադրբեջանի կազմում. «Այդ գործընթացը կքննարկվի», հրապարակման մեկնաբանություններ բաժնում իր անձնական՝ Ալիտա Ալչանգյան էջով անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝ հրապարակային այլ եղանակով բռնություն գործադրելու հրապարակային կոչ պարունակող մեկնաբանություն է կատարել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ՝ Էդուարդ Արթուրի Աղաջանյանի լուսանկարի ներքո՝ մեկնաբանություններ բաժնում նշելով՝ «Եթե չենք կարողանում մարդավարի հեղափոխություն անել գոնե սրանց նմաններին հատիկ- հատիկ վերացնել կարող ենք»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆԵԼ Է

Օգոստոսի 4-ին ոստիկանություն զանգած քաղաքացին հայտնել էր, որ Աբովյան քաղաքի գերեզմանատնից գողացել են ազգականների գերեզմանոցի զարդանախշերը: Ոստիկանությունից հայտնում են, որ հուլիսի 17-ից օգոստոսի 4-ն ընկած ժամանակահատվածում Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի հարակից գերեզմանատնից գողացել են նշված գերեզմանոցի ցանկապատի դյուրալյումինե զարդանախշերը: Դեպքի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ: Կոտայքի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզել են արարքը կատարողի ինքնությունը: Երեւանի Դավիթ Բեկի փողոցի 49-ամյա բնակիչը բացատրական աշխատանքի արդյունքում սեպտեմբերի 19-ին ներկայացել է ոստիկանության Կոտայքի բաժին: Նա խոստովանել է, որ գողություններ է արել նաեւ այլ գերեզմանատներից: 49-ամյա տղամարդը ձերբակալվել եւ ներկայացվել է Աբովյանի քննչական բաժին: Քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 44 դեպք, որից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Բերդ քաղաքից հայտնում են, որ Երեւանից, ՊԵԿ-ից ստուգողների խումբ է գնացել Բերդ, որը ստուգումներ է կատարել սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ խոշորացված համայնքի ընտրություններում՝ անազատության մեջ գտնվող Հարություն Մանուչարյանի գլխավորած «Ջորավոր համայնք» դաշինքի թեկնածուների, ակտիվիստների օբյեկտներում, սակայն էական խախտումներ չեն հայտնաբերել: Ոռժային կառույցների Բերդի ստորաբաժանումների ղեկավարները ճնշումներ են գործադրում, առանձնազրույցներ են ունենում «Ջորավոր համայնք» դաշինքի անդամների, ակտիվիստների վրա, որպեսզի վերջիններս ընտրությունների հետ կապված ակտիվություն չցուցաբերեն: Բերդի համայնքի բնակիչները հայտնում են, որ խորհրդային տարիներին Բերդի տարածաշրջանը Հայաստանի սահմանամերձ շրջաներից միակն է եղել, ուր ադրբեջանցիներ չեն բնակվել: Բերդ համայնքի բնակիչները սեպտեմբերի 25-ի ընտրությունները դիտարկում են, որպես ադրբեջանցիների մուտքը Բերդ, նրանց տարածքներ զիջելը կանխելու միջոց, այդ պատճառով իշխանական ճնշումներին հաստատակամ դիմագրավում են: Նրանք չեն կասկածում, որ սեպտմբերի 25-ի ընտրություններում « Ջորավոր համայնք» դաշինքը ստանալու է ընտրողների քվեների մեծամասնությունը:

ԲԺԻՇԿՆԵՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆ

Սեպտեմբերի 18-ին Նոյեմբերյանի ԲԿ-ից առողջական ծանր վիճակում Երեւանի «Էրեբունի» ԲԿ է տեղափոխվել Նոյեմբերյան քաղաքի 40-ամյա բնակիչ, Նոյեմբերյանի թիվ 2, հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Արմեն Ամիրաղյանը: Նա վատ է զգացել իրենց տանը, տեղափոխվել է Նոյեմբերյանի բժշկական կենտրոն, այնտեղից էլ՝ ռեանոմոբիլով Երեւան: Տղամարդը անչափահաս 4 երեխաների հայր է: Նոյեմբերյանի ԲԿ-ից հայտնեցին, որ տղամարդու առողջության կտրուկ վատանալու պատճառը հայտնի չէ, դա պարզելու համար նա «Էրեբունի» ԲԿ-ում պետք է հետազոտվի: Ա. Ամիրաղյանի հարազատները հայտնեցին, որ «Էրեբունի» բժշկական կենտրոնում Ա. Ամիրաղյանը ուշքի է եկել, սակայն իր հարազատներին չի ճանաչել: Հարազատները կարծում են, որ նրա վատանալու պատճառը թունավորումն է, Ա. Ամիրաղյանը իր ունեցած փեթակների մեղուներին տզի դեմ պայքարի սրսկում է արել եւ կարող էր դրանից թունավորվել: Ա. Ամիրաղյանի հարազատների վկայությամբ՝ հիվանդի առողջական վիճակի կտրուկ վատանալու պատճառը պարզելու համար «Էրեբունի» ԲԿ է հրավիրվելու հատուկ մասնագետ, որի կատարած հետազոտությունը եւ դրանից բխած մասնագիտական եզրակացությունը կարեւոր է հիվանդի ապաքինման համար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի հրամանով՝ հաստատվել է 60 նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ 2022-2023 ուսումնական տարում կիրականացվեն նախադպրոցական կրթական համալիր ծրագրերի փորձարկումները, որոնք մեկնարկել են՝ ըստ նախադպրոցական նոր չափորոշչի: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԿԳՄՄՆ-ից:

Նշենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որով սահմանվում են երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, կրթական ծրագրերի բովանդակությունը, երեխաներին ներկայացվող որակական պահանջները, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության եւ զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է, որը ներառում է ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները եւ դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի եւ առաջադիմության մակարդակի դիտարկման ձեւերը:

Համաձայն «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող մասնագետները պետք է շարունակական վերապատրաստումներ անցնեն:

Այդ նպատակով «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մշակվել են նաեւ վերանայված ծրագրերին համապատասխան վերապատրաստումների մոդուլներ: Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար նշված մոդուլներով 2022 թ. օգոստոսին կազմակերպվել են վերապատրաստումներ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատություններում նոր չափորոշիչը ներդնելու նպատակով 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների առարկայական ծրագրերը, որոնք Տավուշի մարզում փորձարկվելուց հետո լրամշակվել են:

Նշվել է, որ Տավուշի մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարաններում իրականացվել է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշչի եւ դրա հիման վրա մշակված ու ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլ եւ մայիս ամիսների համապատասխան հրամաններով հաստատված առարկայական նոր չափորոշիչների եւ ծրագրերի ներդրման փորձնական ծրագիրը:

Հումանիտար եւ հասարակագիտական առարկաների մասով փորձարկման ընթացքը համակարգել է «Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը, իսկ բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) առարկաների մասով՝ «Այբ» կրթական հիմնադրամը: Իրականացվել են ուսուցիչների վերապատրաստումներ, ինչպես նաեւ տրամադրվել է մենթորական աջակցություն:

Չափորոշիչը հիմնված է ութ կարողունակությունների վրա, որոնք հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանումպետք է զարգացնել ուսումնառության ընթացքում, իսկ հետագայում՝ կրթական այլ հաստատություններում եւ ողջ կյանքի ընթացքում: Կարողունակությունների զարգացման ուղղությունները նկարագրելու համար չափորոշչում սահմանվել են տարրական, հիմնական եւ միջնակարգ կրթության վերջնարդյունքները, որոնք վերառարկայական են:

2021-2022 ուսումնական տարվա ավարտին փորձարկման արդյունքների հիման վրա լրամշակվել են ծրագրերը, որոնք ՀՀ բոլոր ուսումնական հաստատություններում պետք է ներդրվեն 2023-2024 ուսումնական տարում:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության տարածքային անձնագրային ծառայություններում առաջին կարգի մասնագետների, ինչպես նաեւ իրավախորհրդատուների թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարվում է ընդունելություն: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը:

Դիմումատուներին ներկայացվում են հետեւյալ հիմնական պահանջները.

բարձրագույն կրթություն (իրավախորհրդատուների համար՝ իրավաբանական կրթություն),

հայերենի գերազանց իմացություն,

օտար լեզվի իմացություն /ցանկալի է/,

աշխատանքային փորձ /ցանկալի է/:

Ցանկացողներին խնդրում ենք avv.dimum@police.am էլեկտրոնային հասցեին ուղարկել ինքնակենսագրական, որից հետո վերջիններս կհրավիրվեն մասնակցելու նախնական ընտրությանը:

«Մասնակիցներին խնդրում ենք նախապես ուսումնասիրել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին», «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաեւ ՀՀ կառավարությանն 25.12.1998թ. թիվ 821-Ն որոշումը՝ անձնագրային ծառայությունների գործունեությունը կանոնակարգող հիմնական իրավական ակտերի շրջանակում ընդունելության օրը հարցադումներին պատասխանելու համար»,- ասված է հայտարարության մեջ:

ՓՈԽԱՆՑԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ադրբեջանական կողմն երեկ՝ սեպտեմբերի 20-ին, Հայաստանին է փոխանցել 95 հայ զինծառայողի դի: Այդ մասին հայտնել է ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արամ Թորոսյանը:

Ադրբեջանական կողմի ագրեսիայի հետեւանքով զոհվածների եւ անհետ կորածների թիվը հասնում է 207-ի, այդ թվում՝ զոհվել է քաղաքացիական 3 անձ, 2 քաղաքացիական անձի գտնվելու վայրը համարվում է անհայտ, վիրավորվել է 293 զինծառայող, 3 քաղաքացիական անձ, գերեվարվել է 20 զինծառայող:

Սեպտեմբերի 17-ին ադրբեջանական կողմը եւս 32 զինծառայողի մարմին էր փոխանցել հայկական կողմին:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները սահմանի ողջ երկայնքով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել էին ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ: Հակառակորդը հարվածում էր թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական օբյեկտներին: Պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ սեպտեմբերի 14-ին, ժամը 20:00-ից բոլոր ուղղություններով կրակը գրեթե դադարել է, էական միջադեպեր չեն արձանագրվել:

Սեպտեմբերի 20-ի դրությամբ՝ հայ-ադրբեջանական սահմանին իրադրության փոփոխություն չի արձանագրվել:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

Հարգելի՛ հաճախորդներ

Տեղեկացնում ենք, որ «Յունիբանկի» «Թիվ 47» մասնաճյուղը /Երեւան, Սեւանի 12/5/ կտեղափոխվի նոր տարածք: «Թիվ 47» մասնաճյուղի նոր հասցեն է՝ ք. Երեւան, Քրիստափորի փողոց, թիվ 2/11 եւ թիվ 2/12: Մասնաճյուղն իր աշխատանքը նոր հասցեում կսկսի 2022թ.-ի սեպտեմբերի 19-ից:

«Յունիբանկի» մասնաճյուղերի հասցեներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ www.unibank.am կայքէջում:

Տեղեկատու կենտրոն՝
+374 10 59 55 55

«Յունիբանկը» վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի 08.09.2022թ. թիվ 126/2606/ եւ 09.09.2022թ. թիվ 127/2607/ համարների 6-րդ էջերում տպագրված «Բիէսթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «Բիէսթի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող ստորեւ նշված լոտերի աճուրդային փուլերը տեղի կունենան՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում, դասական եւ հոլանդական եղանակով 26.09.2022թ.-ին, ժ.12:00-ին եւ հոլանդական եղանակով՝ 27.09.2022 թ., նույն ժամին, այդ փուլի մեկնարկային գին սահմանելով նախորդ փուլի հատման գինը: Աճուրդի ավարտը՝ 27.09.2022թ.

- ք. Երեւան, Շենգավիթ, Մանանդյան փողոց, 1 շենք, 20 հասցեում գտնվող 51,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21850000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղամաս, 21/31 հասցեում գտնվող 0,21 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 59000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղամաս, 21/32 հասցեում գտնվող 0,3 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 84010000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Աղաբաբյան փողոց, 1/12 հասցեում գտնվող 3,1832 հա հողամաս:Լոտի մեկնարկային գինը՝ 487000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 74/2 հասցեում գտնվող 393,7 ք.մ. արտադրամաս, 38,7 ք.մ. արտադրամաս, 23,2 ք.մ. սանհանգույց, 44,3 ք.մ. պահեստ, 12,3 ք.մ. արտադրամաս, 43,5 ք.մ. պահեստ, 245,7 ք.մ. շինություն-ծածկ, 62,2 ք.մ. /124,4 խ.մ./ պարիսպ եւ 0,1982 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 67500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Վ. Անտառային փողոց, 124/15 հասցեում գտնվող 639 ք.մ. բնակելի տուն (ավարտվածության աստիճանը՝ 50-80%), 70,5 ք.մ. ավտոտնակ, 40 ք.մ. լողավազան եւ 0,16 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 716000000 ՀՀ դրամ
- Կոտայքի մարզ, համայնք Քասախ հասցեում գտնվող 1,0626 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14090000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Քասախ հասցեում գտնվող 4,5 հա հողամաս:Լոտի մեկնարկային գինը՝65000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Քասախ հասցեում գտնվող 5,71 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 75700000 ՀՀ դրամ:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 27 շենք, 35 հասցեում գտնվող 56,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15100000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Հ. Թումանյան փողոց, 52 հասցեում գտնվող 259.9 ք.մ. բնակելի տուն եւ 0.11 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 24800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 55 շենք, 28 հասցեում գտնվող 42,93 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6300000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Իսակովի փողոց, 40/1 հասցեում գտնվող 95,75 ք.մ. բնակելի տուն, 26,54 ք.մ. տնտեսական շինություն, 59,39 ք.մ. ընդհանուր մակերեսով ինքնակամ բնակելի տուն եւ շինություններ եւ 0,0476 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17100000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Անի, Մարալիկ ք., Հ. Շահինյան փողոց, 34/1 հասցեում գտնվող 192,01 ք.մ. առեւտրի եւ սպասարկման սրահ, 1,63 ք.մ. ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ եւ 0,0132 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Վ. Տերյան փողոց, 1 շենք, 6 հասցեում գտնվող 51,48 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Կամոյի փողոց, 38 հասցեում գտնվող 99,5 ք.մ. բնակելի տուն, 10,24 ք.մ. անասնաշենք, 7 ք.մ. մառան եւ 0,024 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 5-րդ փողոց, 19/1 հասցեում գտնվող 115,1 ք.մ. բնակելի տուն, 11,1 ք.մ. խորդանոց (12,4 ք.մ. արտաքին մակերեսով), 17 ք.մ. ավտոտնակ (18,7 ք.մ. արտաքին մակերեսով) եւ 0,03087 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝25800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Չեխովի փողոց, 16 շենք, 45 հասցեում գտնվող 71,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝29100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Ա. Խաչատրյան փողոց, 11 շենք, 44 հասցեում գտնվող 75,5 ք.մ. բնակարան եւ 27,72 ք.մ. ինքնակամ շինություններ: Լոտի մեկնարկային գինը՝28600000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Այգեվան, 7 փողոց, 19 հասցեում գտնվող 111,9 ք.մ. բնակելի տուն, 16,6 ք.մ. խոհանոց, 31,2 ք.մ. ավտոտնակ, 6,9 ք.մ. թոնրատուն, 18,2 ք.մ. անասնաշենք, 15,8 ք.մ. նկուղ եւ 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11100000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-4 Ածխահատների թաղամաս, 17 շենք, 1 հասցեում գտնվող 76,43 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝8700000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ֆ. Նանսենի փողոց, 12 շենք, 5 հասցեում գտնվող 52,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝24800000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Գառնի, Շիրազի փողոց, 14 հասցեում գտնվող 270,9 ք.մ. բնակելի տուն, 14,2 ք.մ. թոնրատուն, 10,5 ք.մ. կաթսայատուն եւ 0,108 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝25900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Հարավային թաղամասի Գ. Սարյան փողոց, 9 հասցեում գտնվող 246,48 ք.մ. բնակելի տուն, 7,47 ք.մ. անասնաշենք, 28 ք.մ. կիսակառույց շինություն եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝20600000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Խանջյան փողոց, 1գ շենք, 13 հասցեում գտնվող 53,05 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա.Պոպովի փողոց, 65 հասցեում գտնվող 306,2 ք.մ. բնակելի տուն, 4,6 ք.մ. թռչնանոց, 21,3 ք.մ. ծածկ եւ 0,03862 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝35500000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 07.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝07.11.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Վ. Բրյուսովի փողոց, 30 շենք, 9 հասցեում գտնվող 111,8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝56500000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում, դասական եւ հոլանդական եղանակով 07.10.2022թ.-ին, ժ.12:00-ին եւ հոլանդական եղանակով՝10.10.2022 թ., նույն ժամին, մեկնարկային գին սահմանելով նախորդ փուլի հատման գինը: Աճուրդի ավարտը՝ 10.10.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող աշխատանքային օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՖԼԵՇՄՈԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐԸ

Վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած դաստերազմական գործողությունների հետ կապված՝ Հայաստանին աջակցելու մասին են հայտնել բազմաթիվ մշակութային գործիչներ, արտերկրում բնակվող հայ հայտնիներ:

Ստորեւ ArmLur.am-ը ներկայացնում է նրանց:

Ռուս դերասանուհի եւ հաղորդավարուհի Սաթի Սպիվակովան միացել է Սարիկ Անդրեասյանի՝ ՌԴ-ում ապրող հայտնի հայերի շրջանում կազմակերպած ֆլեշմոբին:

«Հայրենիք իմ: Սիրելի հայ ընկերներ: Որտեղ էլ լինեք, միացե՛ք ֆլեշմոբին: Թող մեր ձայնը լսելի լինի ամեն տեղ: Հայաստան մենք քեզ հետ ենք»,- գրել է Սաթի Սպիվակովան:

Queen խմբի կիթառահար Բրայան Մեյն Ինստագրամի իր էջում իր աջակցությունն է հայտնել Հայաստանին: Մեյը նաեւ հիշեցրել է՝ «Սթարմուս» փառատոնի ժամանակ Հայաստանում ելույթ է ունեցել խմբի վոկալիստ Սերժ Թանկյանի հետ:

«Ես այստեղ խախտում եմ լռությունս, քանի որ, կարծես թե, հերթական ողբերգությունն է ծավալվում, եւ վտանգ կա, ինչպես միշտ է պատահում մեր օրերում, երբ լրատվամիջոցները ճշմարտացիորեն չեն հայտնում այդ մասին: Հայաստանը փոքր երկիր է՝ զուրկ նավթից, գազից կամ զգալի հարստությունից, քրիստոնեության եւ ժողովրդավարության կղզի է՝ բոլոր կողմերից շրջապատված բռնապետություններով: Դա աշխարհի ամենախաղաղ երկրներից մեկն է, որտեղ իր ողբերգական պատմության պատճառով մեծ տխրություն կա: Այսօր Հայաստանին կրկին սպառնում է մի դավադրություն, որի նպատակն է ջնջել նրան աշխարհի երեսից: Ընդամենը երկու օր առաջ Ադրբեջանը հայ ժողովրդին ահաբեկելու եւ ապակայունացնելու նպատակով գնդակոծում էր հայկական սահմանին գտնվող խաղաղ գյուղերը: Երեք անողոք բռնապետությունների անազնիվ դաշինքի դեմ Հայաստանը բոլորովին անպաշտպան է եւ գոյատեւելու համար Արեւմուտքի լիակատար աջակցության կարիքն ունի: Աշխարհը պետք է իմանա այս իրավիճակի մասին: Խնդրում եմ՝ տարածեք այս գրառումը՝ հակազդելու Ադրբեջանի եւ նրա դաշնակիցների կողմից տարածվող կեղծ տեղեկություններին, որոնք տպավորություն են ստեղծում, թե հայերն ագրեսոր են, ինչպես որ Ռուսաստանն էր փորձում անմեղ եւ զարհուրելի բռնությունների ենթարկված ուկրաինացիներին ներկայացնել որպես ագրեսորներ: Մի աշխարհում, որտեղ գերիշխում է սուտը, մենք բոլորս պետք է բարձրաձայնենք ճշմարտության եւ արդարության մասին»,- գրել է նա:

Հայազգի աշխարհահռչակ դաշնակահար եւ կոմպոզիտոր Տիգրան Համասյանը ֆեյսբուքյան էջում հրապարակմամբ անդրադարձել է Ադրբեջանի կողմից Հայաստանի հանդեպ ձեռնարկած ագրեսիային: Նա նաեւ տեղեկացրել է՝նոյեմբերին սպասվող շրջագայությունը չի չեղարկվի եւ երաժշտության միջոցով կփորձի սփոփել հանդիսատեսին:

«Սեպտեմբերի 13-ից ի վեր ես ուզում եմ տանը նստել եւ չեղարկել իմ կյանքի ամեն ինչը, բայց նաեւ շնորհակալ եմ Աստծուն, որ որոշակի մխիթարություն եմ գտնում երաժշտություն ստեղծելու միջոցով: Այս ամենն օգնում է ինձ ողջամիտ մնալ վերոնշյալ հարցում: Հուսահատություն...եւ միգուցե իմ հանդիսատեսին երաժշտության միջոցով նման հանգստություն է պետք:

Այսպիսով, ասեմ, որ ԱՄՆ-ում եւ Կանադայում նոյեմբերյան շրջագայությունների ժամկետները դեռեւս չեն չեղարկվի:

Իմ սիրտը սեպտեմբերի 13-ից ի վեր՝ զոհված ավելի քան 130 զինվորների ընտանիքների հետ է, նրանք զոհվել են ադրբեջանական բանակի ներխուժման հետեւանքով, ովքեր գրավել են 10 քառակուսի կիլոմետր հայկական տարածքից:

Ցավոք, միջազգային լրատվամիջոցները Հայաստան ներխուժումը ներկայացնում են որպես «սահմանային բախումներ», քանի որ այս օրերին մի քիչ ավելի շատ նավթ են ստանում Ադրբեջանից՝ռուսական նավթի պակասը լրացնելու համար: Տեսնենք՝ Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կկիրառվե՞ն եւ կստանա Հայաստանը ռազմական օգնություն, թե՞ Եվրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի համար «կարեւոր» կամ «բավականաչափ հարմար» չէ այս իրավիճակի մասին որեւէ բան ասելը: Ես տանել չեմ կարողանում քաղաքականությունն ու քաղաքական գործիչներին, ուստի, այլեւս էներգիա չեմ ծախսի սրա վրա»,- գրել է Տիգրան Համասյանը:

Հիշեցնենք, որ սեպտեմների 12-ին լույս 13-ի գիշերը Ադրբեջանը լայնածավալ հարձակում էր սկսել Հայասանի Հանրապետության վրա:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամերային թատրոնում միշտ թեժ է՝ անկախ աշնանային տրամադրությունից: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց դերասանուհի Անի Լուպեն՝անդրադառնալով ստեղծագործական նորություններին:

«Թեժ է նույնիսկ ամռան ամիսներին, երբ բոլորը գնում են հանգստի: Կարողանում ենք արագ կազմակերպել եւ շուտ վերադառնալ:

Թատրոնում ունեցանք նոր պրեմիերա՝ «Ծննդյան վկայական», դեռ նորերը սպառվում են, իսկ հեռուստանախագծերի առաջարկներ կան, բայց թատրոնում այս պահին զբաղվածությունս շատ է եւ ծանրաբեռնված գրաֆիկն է միակ պատճառը որ չեմ կարողանում համատեղել:

Հուսով եմ՝ առաջարկներ կլինեն, եւ կկարողանամ հասցնել ժամանակի մեջ»,- ասաց դերասանուհին:

ՔԻՉ–ՔԻՉ՝ ՄԱՐԴԻԿ ԿԳԱՆ

Այս պահին մոտ 40 տան ներկայացուցիչներ վերադարձել են բնակավայր: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Սոթքի վարչական ղեկավար Սեւակ Խաչատրյանը նշելով, որ այս պահին գրեթե ամբողջությամբ վերականգնված է գյուղի էլեկտրաէներգիան:

«Գյուղ են վերադարձել հիմնականում տան մեծերը, երեխաներին եւ կանանց չեն բերում: Կարծում եմ՝ քիչ-քիչ մարդիկ կգան, ամենակարեւորը հոսանքն էր. հիմա վերականգնված է: Շատ վնասված, ավերված տներ կան, Կառավարությունից եկել են, գրանցել, ասել են՝ անպայման փոխհատուցում կլինի, մարդիկ հույսով սպասում են»,-ասաց համայնքի ղեկավարը:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

1/8 ԵԶՐԱՓԱԿՉԻ ԽԱՂԱՑԱՆԿ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Մրցումների կազմակերպման եւ անցկացման բաժինը հաստատել է Հայաստանի գավաթի խաղարկության 1/8 եզրափակիչի խաղացանկը:

Հոկտեմբերի 4, Երեւան
«Արարատ» - «Արարատ-Արմենիա»՝ 19:00-ին
Հոկտեմբերի 5, Երեւան
«Միկա» - «Գանձասար»՝15:00-ին
Հոկտեմբերի 5, Աշտարակ
«Վեստ Արմենիա» - «Ալաշկերտ»՝ 15:00
Հոկտեմբերի 5, Կապան
«Սյունիք» - «Շիրակ»՝15:00
Հոկտեմբերի 6, Վայք
«Լեռնային Արցախ» - «Վան»՝15:00
Հոկտեմբերի 6, Երեւան
ԲԿՄԱ - «Նոա»՝16:00

ՏՈՄՄԵՐԻ ԳՆԵՐԸ

Սեպտեմբերի 20-ին մեկնարկում է սեպտեմբերի 24-ին անցկացվելիք Ազգերի լիգայի Հայաստան-Ուկրաինա հանդիպման տոմսերի առցանց (օնլայն) վաճառքը tickets.ffa.am կայքում: Տոմսերի վաճառքը տոմսարկղում կմեկնարկի սեպտեմբերի 23-ին:

Տոմսերը հնավոր է գնել միայն անձնագրային նույնականացում անցնելուց հետո: Անձնագրային նույնականացումն իրականացվելու է նաեւ Վ. Սարգայանի անվան «Հանրապետական» ստադիոնի տոմսարկղում:

Տոմսերի գներն են.

Հյուսիսային եւ Հարավային տրիբունաներ՝1000 դրամ

Արեւելյան տրիբունա՝ 3000 եւ 5000 դրամ

Արեւմտյան տրիբունա՝8000 եւ 10000 դրամ

Մեկ անձը կարող է գնել ոչ ավելի, քան երկու տոմս:

2006 Թ.–ԻՑ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒՄ

Մադրիդի «Ռեալի» 37-ամյա կիսապաշտպան Լուկա Մոդրիչը մտադիր է շարունակել մրցելույթները Խորվաթիայի հավաքականում մինչեւ Եվրո-2024-ի ավարտը: Այդ մասին հայտնել է Խորվաթիայի հավաքականի բժիշկ Ջորան Բախտիյարովիչը, որն արդեն 30 տարի հավաքականի բժշկական շտաբում է:

«30 տարին մեծ ժամկետ է, իմ ծրագիրն էր հեռանալ Մոդրիչի եւ ավագ սերնդի հետ, սակայն Լուկան որոշել է մնալ հավաքականում մինչեւ Եվրո-2024-ի ավարտը: Ինձ համար բարդ կլինի այդքան սպասելը: Հավաքականի մարզիչի հետ պայմանավորվել եմ, որ Քաթարում մեդալներ նվաճելու դեպքում, մեկը կնվիրեն ինձ»,- Ջորան Բախտիյարովիչի խոսքը մեջբերում է Խորվաթիայի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը:

Բախտիյարովիչը Խորվաթիայի հավաքականում է 1992 թվականից: Այժմ նա կգլխավորի ՈւԵՖԱ-ի բժշկական բաժինը:

Մոդրիչը 2006 թվականից է խաղում Խորվաթիայի հավաքականում՝152 խաղում խփելով 22 գոլ:

● Սեպտեմբերի 23-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝19:00:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կարվում հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի գործողությունը եւ լուծումը:

Տաթեւիկ Արզումանյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերն ուժի մեջ են մտնում ստորագրման պահից, եթե կոլեկտիվ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի գործողության ժամկետը սահմանում են կողմերը, սակայն ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով: Կողմերն իրավունք ունեն երկարաձգելու պայմանագրի գործողության ժամկետը, սակայն ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով:

Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի գործողության ժամկետի վերջին երկու ամսվա ընթացքում կողմերը կարող են սկսել կոլեկտիվ բանակցություններ՝ նոր կոլեկտիվ պայմանագիր կնքելու կամ գործող կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերը գործում են մինչեւ դրանցում նշված ժամկետի ավարտը եւ վաղաժամկետ կարող են լուծվել կոլեկտիվ պայմանագրով նախատեսված դեպքերում եւ կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են կողմերը կամ այդ նպատակով նրանց լիազորած ներկայացուցիչները: Հանրապետական, ճյուղային եւ տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն կարող է իրականացնել պետական լիազոր մարմինը, եթե կոլեկտիվ պայմանագրի կողմերը անկարող են ինքնուրույն իրականացնել հսկողություն եւ համապատասխան խնդրանքով դիմել են պետական լիազոր մարմին:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքեր ունեն իրավունք երեխայի ծննդյան միանվագ նպաստի:

Ֆրիդա Կարապետյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ծնող): Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում եւ վճարվում է, եթե ծնողը եւ նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, եւ նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը, կամ ծնողը եւ նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում (եթե նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը): Օտարերկրյա քաղաքացի ծնողին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, եւ օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել):

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխայից հրաժարվելու, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում երեխայի ծնողը կորցնում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Վայոց Ձորի մարզում

Երեկ՝ սեպտեմբերի 20-ին՝ ժամը 11:10-ի սահմաններում, Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 160 կմ հատվածում բախվել են Kamaz եւ JAC մակնիշի հեղուկ գազ տեղափոխող բեռնատարները: Վթարի հետեւանքով տուժածներ չկան, իսկ հեղուկ գազ տեղափոխող բեռնատարը կողաշրջվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: